ները, անմիջապէս խանութները փակում են եւ հաւաքուելով անգլիական միսիայի բնակարանի (Մարտուն հիւրանոցը) առաջ, ցոյց են կազմակերպում եւ պահանջում են, որ երկու ներկայացուցիչներին չուղարկեն Բաղու:

Անգլիական հրամանատարը, անմիջապէս իր բնակարանում եւ քաղաքի որոշ մասերում գնդացիրներ է դնել տալիս եւ Ազգային Խորհրդի միջոցով առաջարկում է ցրուել, խոստանալով որ երկու հայ ներկայացուցիչները նորից կը վերադառնան:

Նման յայտարարութիւն լսելուց եւ Ազգ. Խորհրդի միջամտութիւնից յետոյ, ժողովուրդը ցրւում է, յոյս ունենալով, որ Լ. Զարիֆեան ու Գ. Բալայեան նորից կը վերադառնան: Բայց մինչեւ վերջն էլ չեն վերադառնում:

Շուշուայ Ազգ. Խորհուրդը մի քանի անգամ թէ՛ գրաւոր եւ թէ՛ բանաւոր առաջարկութիւններ է ստանում անգլ. միսիայից. բայց միշտ էլ դրժողական պատասխան է տալիս, փաստացի տուեալներով պատճառաբանելով:

Ինչպէս անցեալում էլ ասացինք, Սոկրատ բէկն ու Գերասիմ աղան անջատ բանակցութիւնների մէջ էին անգլիական միսիայի եւ Ս. Սուլթանովի հետ:

Անգլիական միսիան էլ օգտուելով այդ երկուսի թրքասիրութիւնից, ամէն կերպ աշխատում է չէզոքացնել նրանց, Ազգային Խորհրդից:

Իր նպատակին հասնելու համար, Ղարաղլաղի եւ Հարարի գաղթականութեանը օգնելու պատրուակով, մեծ դումար է բաց թողնում Սոկրատ բէկին. իսկ վերջինս էլ, իր ցանկացած ձեւով, առանց հաշիւ տալու որեւէ մէկին, չոայլում է այդ դումարները:

Ազգային Խորհրդի աշխատանքները, մեծամասամբ ծանրացած էին Եղիշէ Իշխանեանի վրին:

Ապառաժի Կ. Կոմիտէն, տեսնելով այդ երկու անձնաւորութեանց անջատ քաղաքականութիւն վարելը, Ազգային Խորհրդի մի քանի անդամների հետ խորհրդակցելուց յետոյ, որոշում է մարդ ուղարկել Բաղու եւ դրութիւնը մանրամասնօրէն պարզել Բաղուի Ազգային Խորհրդին:

Շուշուայ Ազգային Խորհուրդը մի դրութեամբ դիմում է Բաղուի անգլիական հրամանատարութեանը, խնդրելով որ թոյլ տրուի Ղարաբաղի հայութեան ներկայացուցիչներին ուղարկել Բաղու՝ իրերի դրութիւնը պարզելու համար:

Այդ դիմումը յարգւում է Բաղուի անգլ. հրամանատարութեան կողմից, որից յետոյ Ասլան Շահնազարեանի գլխաւորութեամբ մի պատուիրակութիւն է գնում Բաղու:

Բժ. Խոսրով բէկ Սուլթանովը, օգտուելով իրեն համար ստեղծուած նպաստաւոր դրութիւնից, եւ անգլիական միսիայի (Շուշիի) աջակցութիւնից, կամաց-կամաց Շուշուայ հայկական մասի քաղաքացիական վարչութիւնը վերցնում է իր ձեռքը:

Ազգային Խորհուրդը, տեսնելով որ դրութիւնը ծանրանում է, որ Սուլթանովը օգտուելով անգլիացիների դէպի Ադրբէյջանի կառավարութեանը տածած բարեացակամ վերաբերմունքից, յարձակողական քայլերի է դիմում. իսկ միւս կողմից էլ նկատի ունենալով, որ քաղաքի հայ ազգաբնակութիւնը զինաթափ վիճակում է եւ որ քաղաքի վաճառականութիւնը դէմ է ռազմական գործողութիւնների, նպատակայարմար է համարում Զինուորական Շտաբը տեղափոխել գաւառ, աւելի ազատ եւ ուժեղ կերպով ինքնապաշտպանական գործը կազմակերպելու նպատակով:

Լ. Զարիֆեանն ու Գ. Բալայեանը Շուշուց աքսորուելուց յետոյ, Հայաստանի կառավարութիւնը բաւական ուշացած, Ապրիլի սկզբներին, Թիֆլիսի անգլիական բարձր հրամանատարութեան համաձայնութեամբ, Շուշի է ուղարկում Միշա Արզումանեանին՝ Ղարաբաղի խնդիրը պաշտպանելու համար:

Մ. Արզումանեանը իր ուժերը ներածին չափ աշխատում է Ղարաբաղի խնդիրը պաշտպանել յօգուտ Հայաստանի կառավարութեան. իսկ անգլիական հրամանատարը աշխատում է օգտագործել Հայաստանի կառավարութեան ներկայացուցչի Ղարաբաղում լինելը եւ առաջարկում է նրան յայտարարել, որ Ղարաբաղ-Զանգեզուրը ժամանակաւորապէս ենթարկւում են Ադրբէյջանի կառավարութեանը: Միշա Արզումանեանը հրաժարւում է նման յայտարարութիւն անելուց, որից յետոյ անգլ.